

եկած անձ մը կարենար մարդասպանութիւն մը գործել, և յայտնապէս երեւան կուգայ որ ցոյց տրուած փաստք ամենապարզ սուտ մըն է :

Մնաց որ, Ֆրանսացի ժը, M. Sabatier և Ապտիւլ Քալիք անունով պարկեշտ միւսլիման մը, վկայած են որ քահանան Իսլամներուն կողմէ սպաննուեցաւ՝ առանց ոչ մէկ պատճառի :

Իմ կարծիքով, Ատանայի դէպքերուն նկարագիրը բաւական չափով կը յայտնուի այն ուրախութիւններէն՝ որոնցմով Հայերու և ընդհանրապէս քրիստոնեայ տարրին դէմ տարուած յաղթանակը տօնուեցաւ : Ապրիլ 12ին, մինչդեռ մէկ կողմէն քանի մը սատիկան-դին-ուորներ՝ ջարդերէն վերապրած խեղճ Հայերու խումբ մը քաղաքէն դուրս կը վանէին, ուրիշ սատիկան-դին-ուորներ վիլայէթին բոլոր բարձր պաշտօնատարներուն ներկայութեանը. «Կեցցէ՛ Սուլթան Համիտ, անկցի՛ ազատութիւնը» ազազակներով Սահմանագրութեան վաղորդայնին քաղաքին հրապարակին վրայ կանգնուած յաղթական կամարը կը ֆանդիկն :

Այս միջադէպը շատ յատկանշական է :

---

Գ.

Կառավարութեան ընթացքը դեպքերէն առաջ եւ վերջը

Վերև յիշատակուած իրողութիւնները ներկայացնելէ վերջ, ինծի աւելորդ կը թուի զբաղիլ կուսակալ Ճէվատ պէյի և Ատանայի պաշտօնատարներուն՝ ինչպէս նաև Ճէպէլը-Պէրէքէթի կառավարիչին ընթացքին վրայ : Իմ կարծիքով, իրենց ընթացքը ապացուցած է, օրէնքով ճշտուած բոլոր պայմաններուն մէջ, որ անոնք բացարձակապէս յանցապարտ են իրենց